# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/49 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **08 հունիսի 2026թ.**

2026թ. մայիսի 29-ից հունիսի 08-ը, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ մարդատար մեքենայի ձեռքբերման **ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/49** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Եղիազարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի տնտեսական բաժնի պետ, |
| Ա. Մելքոնյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի տնտեսական բաժնի վարորդ-մատակարար, |
| Հ. Պոլյակովա՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի տնտեսական բաժնի մատակարար: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Եղիազարյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Հովհաննիսյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:
5. Համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ի, անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. մայիսի 29-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 15:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1-ին | Մարդատար մեքենա | 28,000,000.00 | 01.06.2026 15:30 | 28,000,000.00 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԵՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև Մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «ՍԻԱՐ ԱՎՏՕ» ՍՊԸ | Հայաստան, Կոտայք, Պռոշյան 5րդ փ 8րդ նրբ 29, 033221199 | info@changan.am | 03579228 |
| 2 | «ՍՔԱՅ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ | ք.Երևան, Թբիլիսյան 20, 011711711 | info@skymotors.am | 00479165 |

2026թ. հունիսի 01-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ **«ՍԻԱՐ ԱՎՏՕ» ՍՊԸ-ի** , ում

կողմից «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես **«ՍԻԱՐ ԱՎՏՈ» ՍՊԸ-ի** կողմից առաջարկվել է՝ «Էլեկտրական մարդատար մեքենա, ձիաուժ՝ 163, փոխանցման տուփը՝ ռեդուկտորային: Վազքը մեկ լիցքավորմամբ/CLTC- 506կմ, չափսերը /մմ/՝ երկարություն՝ 4435, լայնություն՝ 1855, բարձրություն՝ 1600: Անվային բազա՝ 2735մմ:

Անվադողերի չափսերը՝ R18 դույմ թեթևաձույլ անվահեծ: Թափքի տեսակը՝ քաղաքային SUV, 5 դուռ, նստատեղերի քանակը 5, առջևի քարշակ: Արտադրության տարեթիվը 2026թ.: Հարմարավետությունը՝ Օդորակիչ, տաքացնող և հովացնող համակարգ, 360 աստիճան տեսախցիկ, 3D հնարավորություն, կողային դռների բոլոր 4 ապակիները էլեկտրակառավարվող, կենտրոնական փական համակարգով, սրահի առջևի և հետևի ռետինե գորգեր: Հեռակառավարվող կենտրոնական փական, ESC համակարգ, ներառյալ ABS (արգելակման ապաբլոկավորման համակարգ), սմարթ կրուիզ վերահսկում, գծերի ճանաչում: Երաշխիքային ժամկետը՝ 60 ամիս կամ 150 000 կմ», իսկ Ընթացակարգի հրավերով պահանջվել է.

«SUV թափքով մեքենաներ

Շարժիչը՝ EV / ԷՏՄ – Էլեկտրական տրանսպորտային միջոց,

Ձիաուժը՝ առնվազն 160

Փոխանցման տուփը՝ ռեդուկտորային:

Վազքը CLTC ստանդարտով-Առնվազն 500կմ,

Չափսերը /մմ/՝

Երկարություն՝ 4400-4500

Լայնություն՝ 1850-1950

Բարձրություն՝ 1550-1650

Անվային բազա՝ առնվազն 2730,

Ճանապարհային լուսածերպ (կլիրենս)՝ առնվազն 160մմ,

Անվադողերի չափսերը՝ Նվազագույնը R18 դույմ թեթևաձույլ անվահեծ, պահեստային անվադող՝ անվահեծանով,

Թափքի տեսակը՝ Քաղաքային SUV, գույնը՝ բաց կամ մուգ մոխրագույն, 5 դուռ, նստատեղերի քանակը 5, առջևի քարշակ,

Արտադրության տարեթիվը 2026թ.,

Հարմարավետությունը՝ Օդորակիչ, տաքացնող և հովացնող համակարգ, առնվազն 4 բարձրախոսով, 360 աստիճան տեսախցիկ, 3D հնարավորություն, կողային դռների բոլոր 4 ապակիները էլեկտրակառավարվող, կենտրոնական փական համակարգով, սրահի առջևի և հետևի ռետինե գորգեր:

Անվտանգությունը՝ Մեքենայի սրահում առնվազն 2 անվտանգության բարձիկ, սրահի յուրաքանչյուր նստատեղ ունենա իր առանձին ամրագոտին, հեռակառավարվող կենտրոնական փական, ESC համակարգ, ներառյալ ABS (արգելակման ապաբլոկավորման համակարգ), սմարթ կրուիզ վերահսկում, գծերի ճանաչում,

Երաշխիքային ժամկետը՝ Առնվազն 60 ամիս կամ 150 000 կմ:

Վաճառողը երաշխիքային պայմանագիր կնքելուց հետո պայմանագրում ներառվող ապրանքների և ծառայության արժեքները /ներառյալ ապրանքը և դրա փոխարինման արժեքը/ պետք է սահմանի վերջին 1 տարվա ընթացքում շահող ընկերության կողմից այլ անձանց կամ կազմակերպություններին փաստացի մատուցված ծառայությունների և ապրանքների արժեքներից ոչ ավել:

Շահող ընկերությունը պետք է ունենա Գործարանի՝ ՀՀ-ում պաշտոնական ներկայացուցիչ (դիստրիբյուտոր) կամ

-Գործարանի՝ տարածաշրջանում պաշտոնական ներկայացուցչի (դիստրիբյուտորի) կողմից տրված լիազորող գրություն կամ այլ նմանատիպ փաստաթուղթ ունեցող կազմակերպություն, որը վերջինիս իրավասություն է տալիս ՀՀ-ում իրականացնելու համապատասխան մեքենաների վաճառք և սպասարկում:

Մեքենայի վազքը մատակարարից ընդունման պահին չպետք է գերազանցի 200 կմ:

Մատակարարը պետք է ունենա ավտոպահեստամասերի /ընթացային,թափքի մասի պահեստամասեր/ պահեստ կամ խանութ, վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը (ընթացամասի, էլեկտրականության, յուղման, անվաքացքի կարգավորման, վուլկանացման, ինժեկտորի վերանորոգման, ղեկային մասի, շարժիչի, փոխանցման տուփի և կամրջակների վերանորոգման, մեքենայի ախտորոշման և այլ անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ, ինչպես նաև զոդման և թափքի ներկման աշխատանքներ իրականացնելու հնարավորություն):»

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 01-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները:

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Հ/Հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ /լրացվում է հայտերի գնահատման վերջնարդյունքում/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1 | 1 | «ՍԻԱՐ ԱՎՏՈ» ՍՊԸ | 28000000 | 28000000 | 0% | 28000000 | 27700000 | 0% | 27700000 | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | «ՍՔԱՅ ՄՈԹՈ ՐՍ» ՍՊԸ | 28000000 | 30000000 | 0% | 30000000 | 30000000 | 0% | 30000000 | **Մերժված** |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 04-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026թ. հունիսի 08-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026թ. հունիսի 08-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.
2. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ՍԻԱՐ ԱՎՏՈ» ՍՊԸ | բավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2026թ. հունիսի 08-ին Հանձնաժողովը որոշեց, Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի, ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Հովհաննիսյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ի նախագծերը:

2026թ. հունիսի 08-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարության տեքստերը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և

որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Եղիազարյան ______

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Մելքոնյան ______

Հ. Պոլյակովա ______

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Հովհաննիսյան ______